№ 135 ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 31 — 1898 — ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 31 № 135

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօնի օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ստոր վրէժխնդրութիւն. Նոր ապացոյց. Բիսմարկ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աստրախանից. Նամակ Շուշուց. Նամակ Բալախանիից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բանաստեղծը և հերոսը:

ՍՏՈՐ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Գաւառներից դարձեալ լուրեր են հաղորդում, որ զանազան տեղերում սկսել են հացի և խոտի դէզեր կրակ տալ, ծառեր կտրել՝ թշնամական դիտումներով: Ամեն տարի այդ տխուր երեւոյթը կրկնվում է և գիւղական ժողովուրդը, փոխանակ ուղղվելու, շարունակում է գործադրել վրէժառութեան այդ ստոր ձևը: Գիւղացին, որ օրն ի բուն աշխատում է աւելի հաց և խոտ ամբարել իր համար, որ գիւղի ամենամեծ դժբախտութիւններից մէկը այն է համարում, երբ կարկուտը, հեղեղը, երաշտը կամ ցուրտը փչացնում են նրա հացն ու խոտը, ինքը այն աստիճան անկման է հասնում, որ վճռում է ուրիշի հացն ու խոտը կրակ տալ, որպէս զի իր անձնական վրէժը լուծած լինի և իր քինախնդրութիւնը յագեցնելով գցի հակառակորդին դժբախտութեան և կարօտութեան մէջ:

Դա հակառակորդի դէմ մաքառելու մի անարժան, տմարդի և վայրենի ձև է, որին պէտք է վերջ դնել: Փոխադարձ հաշիւները կարելի է տեսնել և վերջացնել գիւղական դատարանում, հեղինակաւոր համագիւղացիների շրջանում, մի խօսքով երես առ երես, առանց դիմելու ստոր միջոցների, որոնք բոլորովին վայր են գցում վիրաւորվածի բողոքի և դատի նշանակութիւնը: Բայց անձնական վրէժառութեան տեսակէտից զատ՝ կայ այստեղ և մի ուրիշ տեսակէտ, որ դատապարտում է այդպիսի վարմունքներ: Դա հասարակական-տնտեսական տեսակէտն է: Հացը և խոտը մթերքներ են, որոնք անհրաժեշտ են մարդկանց և անասուններին կերակրելու համար, նրանք իրանց պատրաստութեան համար պահանջել են մեծ աշխատանք, հոգս, ծախք, որոնք պէտք է արդիւնաւոր գործադրութիւն գտնէին, մինչդեռ նրանք ոչնչանում են՝ ամենաստոր զգացմունքներից թելադրված:

Բողոքելով վրէժխնդրութեան այդ ստոր ձևի դէմ, մենք լաւ գիտենք, որ ցոյց ենք տալիս երեւոյթի միայն մի կողմը: Կայ և մի ուրիշ կողմ. դա գիւղական կեանքի այն պայմաններն են, որոնք դրդում են գիւղացիներին դիմել առհասարակ վրէժխնդրութեան և ի միջի այլոց ընտրել վերջինի կոպիտ և հակահասարակական ձևը: Գիւղական կեանքը անկարգ վիճակի մէջ է. այնտեղ շատ անգամ արդարութիւնը ոտի տակ է տրվում, մարդիկ զուր տեղը տանջվում են, հարստահարվում և՝ ինչպէս ժողովուրդն ասում է՝ մարդիկ «ոտի տակ տրորվում են»: Դա մեր երկրի ազգաբնակութեան հիմնական և մեծ ցաւերից մէկն է, որ կարօտ է ուշադիր հոգացողութեան և որին մենք կը վերադառնանք մի ուրիշ անգամ. բայց և այնպէս մենք չենք երկբայում, որ գիւղական ազգաբնակութեան շրջանում ապրող ինտելիգենտ մարդիկ կարող են իրանց խրատներով և խորհուրդներով նպաստել, որ գիւղերում կազմվի հասարակական կարծիք՝ վրէժխնդրութեան անարժան ձևերի դէմ: Այդպիսով գուցէ մասամբ կարելի լինի վերացնել մարդկանց և կենդանիների կերակուրն ու դաժան աշխատանքի արդիւնքը ոչնչացնելու յանցաւոր սովորութիւնը:

ՆՈՐ ԱՊԱՑՈՅՑ

Պետերբուրգի „Вѣстникъ Европы" ամսագրի թղթակիցը Ամերիկայից հաղորդում է իբրև հաստատ լուր, որ ամերիկօ-սպանիական պատերազմից առաջ ֆրանսիական մամուլի մի սենդիկատ դիմեց ամերիկական կառավարութեան, առաջարկելով բարոյական աջակցութիւն ցոյց տալ, այսինքն բռնել ամերիկացիների կողմը, եթէ կառավարութիւնը դրա համար վարձատրութիւն կը տայ: Վաշինգտոնի կառավարութիւնը, աւելացնում է թղթակիցը, կտրուկ կերպով մերժեց այդ առաջարկութիւնը:

Ահա՛ մի նոր փաստ, որ ցոյց է տալիս թէ անկման ո՛ր աստիճանին է հասել ֆրանսիական մամուլը: Բաւական չէր պանամեան սկանդալը, բաւական չէր այն հովանաւորող դերը, որ կատարում էր թիւրքաց բարբարոսութիւնների ժամանակ, վերջապէս բաւական չէր այն կեղտը, որ հանեց Էմիլ Զոլայի և նրա կողմնակիցների դէմ, որպէս զի լռեցնէ արդարութիւն պահանջողներին, այժմ աւելանում է նաև այս զզուելի, ամօթաբեր փաստը: Կաշառքի հանված տպագրական խօսքն էր պակաս այն տխուր դրութեան, որի մէջ գտնվում է ֆրանսիական մամուլը և որը վաղուց Ֆրանսիայի լաւագոյն գործիչների մտատանջութեան առարկայ է դարձել: Եւ իրաւ, կարելի՞ է երեւակայել աւելի սոսկալի դժբախտութիւն, քան այն՝ որ հասարակաց կարծիքի առաջնորդող մամուլը վաճառվում է և նրա ղեկավարը դառնում է ոչ թէ ճշմարտութիւնը, այլ ոսկին: Մամուլը, որ եօթներորդ մեծ պետութիւն էր անուանվում, այժմ հեշտութեամբ վարձկան ծառայի դեր է ստանձնում և լիզում է այն ձեռքը, որ փող է մեկնում նրան: Այդ դրութեան մէջ նա մի սոսկալի չարիք է, մարդկութեան անգութ թշնամի, համաճարակ թոյն, մի համաճարակ հիւանդութիւն...

Խօսքի, մտքի ազատութեան թշնամիները, ցոյց տալով այդ ողբալի երեւոյթը, ասում են՝ թէ ամեն չարիք բղխում է անսահման ազատութիւնից: Դա զրպարտութիւն է ազատութեան դէմ: Վերցրէք անգլիական մամուլը. ո՞վ կարող է ասել թէ նա կարող է վաճառվել անբարոյական կնոջ նման: Անգլիայում բարոյական հիմքերը այնքան ամուր են, ղեկավարող սկզբունքները այնքան անսասան են, որ իւրաքանչիւր վաճառվող, անբարոյական գործիչ կը մատնվէր հասարակութեան դատաստանի անողորմ հալածանքին: Այդպէս չէ ժամանակակից Բաբելոնը. այնտեղ ամեն ինչ ներելի է, և ֆրանսիական հասարակական կարծիքը դատապարտել կարող է միայն նրան, ով վարակված չէ կոյր շովինիզմով և չը գիտէ շոյել այդ զգացմունքը:

ԲԻՍՄԱՐԿ

VIII

«Երեքպետեան դաշնակցութիւնը» հիմնելուց յետոյ էլ՝ Բիսմարկ ամեն կերպ աշխատում էր զգալ տալ Ռուսաստանին իր երկաթէ ձեռքի ծանրութիւնը: Նա սկսեց մի շարք տնտեսական խիստ միջոցներ ձեռք առնել Ռուսաստանի դէմ, վայր գցելով ռուսաց արժէթղթերի գինը, մաքսային նոր, ճնշող օրէնքներ սահմանելով և աշխատելով կռվեցնել Ռուսաստանին Անգլիայի հետ՝ Միջին-Ասիայում: Մի և նոյն ժամանակ Պրուսիան և Աւստրիան սաստիկ սպառազինվում էին, և Բիսմարկ առաջարկութիւն արեց ռէյխստագին՝ աւելացնել 500,000 հոգով գերմանական զօրքը թէ՛ պատերազմի ժամանակ: Ռէյխստագը մերժեց: Գերմանական կանցլերի այդ սպառնալիքներն ստիպեցին Ռուսաստանին դուրս գալ համբերութիւնից և յայտնել «Русскій Инвалидъ»-ի մէջ, որ «Ռուսաստանը չէ վախենում խաղաղութեան լիգայի ամբողջ զօրութիւնից»: Իբրև պատասխան այդ յայտարարութեան, իշխան Բիսմարկ արտասանեց 1888 թւի յունվարի 25-ին մի սպառնական ճառ, որի մէջ պաշտպանելով գերմանական զօրքը 500,000 հոգով աւելացնելու ծրագիրը, յայտարարեց՝ թէ «Գերմանիան կարող է դուրս հանել Ֆրանսիայի և Ռուսաստանի դէմ մի մի միլիոն կրթված և լաւ սպառազինված զօրք» և ապա աւելացրեց. «Մենք, գերմանացիներս, բացի Աստուծուց, ոչ ոքից չենք վախենում»:

Բայց այդ ճառը եղաւ վերջին երգը, որ Բիսմարկ երգեց: Մի ամսից յետոյ մեռաւ ծերունի Վիլհէլմ I կայսրը, նա, որից այժ և խրախոյս էր ստանում երկաթէ մարդը իր գործունէութեան մէջ: Գերմանական գահի վրա բարձրացաւ Ֆրիդրիխ III կայսրը, որ յայտնի էր իր ազատամիտ և սահմանադրական գաղափարներով: Բիսմարկի համար, ինչպէս ինքն էր ասում՝ «վրա հասան իր կեանքի ամենածանր օրերը»: Ամենքն սպասում էին, որ Բիսմարկի տիրապետութեան վերջն այլ ևս հասել է, բայց Ֆրիդրիխ III շատ շուտով մեռաւ իր ծանր հիւանդութիւնից և նրա տեղ թագաւորեց երիտասարդ Վիլհէլմ II, որ երկրպագու էր Բիսմարկի տաղանդին և հետևող իր պապի ուղղութեան: Եւ Բիս-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՀԵՐՈՍԸ

(Իռլանդական սարսափների հարիւրամեակի առթիւ *)

I

1795 թւին անգլիական կառավարութիւնը Իռլանդիայի փոխարքայ նշանակեց լորդ Կեմդենին, հրաժարվելով այդպիսով այն համեմատաբար մարդասէր քաղաքականութիւնից, որին նա հետեւում էր 1782 թւից ի վեր: Այդ րոպէից սկսած Միացեալ-Իռլանդացիների ազգասիրական ընկերութիւնը, որ սփռված էր երկրի բոլոր մասերում և որ մինչև այդ ժամանակ ձգտում էր Իռլանդիան բռնակալութիւնից ազատել զուտ օրինական միջոցներով, նոր բնաւորութիւն ընդունեց,—իր համար վերջնական նպատակ դրեց Իռլանդիայի անջատումը Անգլիայից և իռլանդական հանրապետութիւն հիմնելու միտք յղացաւ: Միւս կողմից ինքը՝ Իռլանդիայի ազգաբնակութիւնը բաժանված էր երկու թշնամի մասերի, որովհետև ժողովրդի ստորին խաւերում փոխադարձ ատելութիւնը անջատում էր բողոքականներին կաթօլիկներից:

Անկարգութիւններին և այդ ներքին պառակտումից առաջացած յուզումներին վերջ տալու համար՝ կառավարութիւնը բողոքականներից կազմակերպեց 37 հազար հոգուց բաղկացած ժանդարմական մի գունդ, որին իրաւունք տուեց՝ թագցրած զէնք փնտռելու պատրուակով, բանտ գցել, տանջանքների ենթարկել և նոյն իսկ մահվան դատապարտել ամեն մի իռլանդացու, հիմնվելով թէկուզ նրա անձնական թշնամու կամ առաջին պատահած սրիկայի մատնութեան վրա: Հարիւրաւոր անմեղ մարդիկ, որոնց յանցանքը կայանում էր միայն նրանում, որ դաւանում էին իրանց պապերի հաւատը, ենթարկվում էին զարհուրելի տանջանքների,—նրանց այնքան ծեծում էին, մինչև որ ուշաթափ էին լինում, ստիպում էին մի ոտի վրա կանգնել սուր ցցի ծայրին, «կիսակախ» էին անում, այսինքն, կախաղան էին բարձրացնում, բայց դեռ չը խեղդված իջեցնում այնտեղից, կամ թէ ձիւթէ թասակ էին դնում գլխներին ու այդպիսով պոկում գանգի մորթը: Բացի դրանից, կառավարութեան պաշտօնեաները խուզարկութիւններ էին կատարում երկրի բոլոր մասերում, կատարեալ ազատութիւն ունենալով կողոպտել, բռնութիւն գործ դնել, իսկ դիմադրութեան դէպքում՝ և սպանել: Բարձրաստիճան սպաները պարծենալով յայտնում էին, թէ մի քանի ընդարձակ նահանգներում չէր մնացել ոչ մի տուն, ուր կանայք պղծված չը լինէին, իսկ երբ ասող էր լինում, թէ իռլանդուհիները երևի շատ էլ ողջախոհ չեն, պատասխան էր լսվում, թէ «ոչ մի ողջախոհութիւն չի կարող դիմադրել սուինի սրին» *):

Այդ բոլորից յետոյ զարմանալի չէ, որ ամենախոհեմ և խաղաղասէր իռլանդացիներից շատերը յուսահատված մտան վերոյիշեալ գաղտնի ընկերութեան մէջ, որ այդ ժամանակ իր կողմից լորդ Էդուարդ Ֆիցջերալդին Ֆրանսիա ուղարկեց Գօշ զօրապետի հետ բանակցութիւններ վարելու, որպէս զի ֆրանսիացիները զօրք իջեցնէին Իռլանդիայի ափը, երբ այնտեղ ընդհանուր ապստամբութիւն բռնկէր: Ժողովրդի ծեր և պարզամիտ պարագլուխ Գրատտանը, չուզենալով գործ ունենալ օտարազգիների հետ, հրաժարվեց որ և է մասնակցութիւնից յեղափոխականների գործերում, յուսահատված հաւասարապէս թէ ճնշողների և թէ ճնշվածների վերջին ծրագիրներից: Այն ժամանակ Իռլանդիայում գաղտնի կերպով կազմվեց դիրեկտորիա (ֆրանսիականի նման), որ Ֆրանսիայի հետ բանակցութեան մէջ մտաւ ուղարկվելի զօրքերի և դրամական նպաստի վերաբերմամբ. բայց բոլոր այդ ծրագիրները յանկարծ ի դերև ելան մի կաթօլիկ իռլանդացու դաւաճանութեան շնորհիւ: Նրա անունը Ռէյնօլդս էր. այդ անպիտանի անունն է, որ արժէ անմոռաց պահել: Էդուարդ Ֆիցջերալդը անկողնում պառկած էր, երբ նրան բռնելու համար ուղարկված զինուորները, ներս խուժեցին այն տունը, ուր նա թագնված էր: Նրա գլխի համար նշանակված էր 1000 ֆունտ ստերլինգ: Թէև նա պառկած դրութեան մէջ էր և բացի թրից ուրիշ զէնք չունէր ձեռքին, այնուամենայնիւ պաշտպանվում էր երեք լաւ զինված անգլիացի սպաների դէմ, որոնցից մէկը երկու-երեք վէրք ստացաւ նրանից, միւսը—տասնուչորս և հազիւ երրորդին աջողվեց զինաթափ անել նրան ատրճանակի հարուածով, որից յետոյ միայն կարողացան բռնել նրան ու տանել բանտ: Նա ծանօթ էր ֆրանսիական յեղափոխութեան լաւագոյն գործիչների հետ, Թօմաս Պէյնի բարեկամն էր, ամուսնացած էր Ֆիլիպպ Egalité-ի գեղեցիկ աղջկայ հետ ու անընդհատ նամակագրութիւն ունէր ֆրանսիացիների հետ և միայն բանտում մեռնելն ազատեց նրան հրապարակական մահվան պատժից:

Այդպիսով ապստամբութեան ղեկավարը բռնվեց և կառավարութիւնը ազատվեց անակնկալ յարձակման ենթարկվելու վտանգից: Բայց, չը նայելով դրան, իշխանութիւնը արտասովոր անգթութիւն և կատաղութիւն ցոյց տվեց երկրում ցրված ապստամբների վերաբերմամբ: Նա մտցրեց պաշարման դրութիւն զինուորական դատարաններով, իսկ այդ դատարանները, անգլիացի պատմաբանների ասելով, կազմված էին «տգէտ և արիւնարբու սրիկաներից», որոնք ներման խոստումներով ու անտանելի տանջանքներով կաթօլիկ վկաների բերանից դուրս էին քաշում կեղծ ցուցմունքներ մեղադրեալնե-

*) Հռչակաւոր դանիացի քննադատ Գէօրգ Բրանդէսի „Տասնիններորդ դարի գրականութեան գլխաւոր հոսանքները" գրքում, որի ռուսերէն թարգմանութիւնը միայն ունենք ձեռքի տակ (Главныя теченія литературы девятнадцатаго столѣтія), կայ մի գլուխ՝ նուիրված իռլանդացի բանաստեղծ Թօմաս Մուրին, որի վրա մեծ ազդեցութիւն է ունեցել պատանի հերոս Ռօբէրտ Էմմէտ: Ներկայ յօդուածը այդ հրաշալի գլխի քաղուածական փոխադրութիւնն է:

*) Համեմատել՝ Massey: History of England, հատոր IV, եր. 302.—այստեղ բերված բոլոր փաստերը և խօսքերը վերցված են անգլիացի ազգասէրների պատմածներից:

մարկ 1888 թ-ի յունիսի 25-ին, րէյխստագում, մեծ ոգևորութեամբ համբուրեց իր նոր վեհապետի ձեռքը, երբ երիտասարդ կայսրն արտասանում էր իր առաջին գահական ճառը: Ամենքը համոզված էին, որ Բիսմարկ կը պահպանի իր տիրապետող ազդեցութիւնը մինչև կեանքի վերջը. որովհետև յայտնի էր, որ Վիլհէլմ II, դեռ սոսկ իշխան եղած ժամանակ, հռչակել էր, թէ Բիսմարկը մի դրօշակակիր է, որին պէտք է հետևի ամբողջ Գերմանիան: Եւ սակայն 1890 թ-ի մարտի 20-ին, աշխարհը մեծ զարմանքով իմացաւ, որ կայսրը ընդունել է Գերմանիայի միութեան ստեղծողի հրաժարականը և այն մարդը, որ իր անունով լցրել է XIX դարի երկրորդ կէսի պատմութիւնը, որ տնօրինում էր Եւրոպայի ճակատագիրը, այլ ևս գոյութիւն չունի քաղաքականապէս: Երիտասարդ կայսրը, որքան էլ Բիսմարկի երկրպագու էր, բայց չը կարողացաւ տանել նրա բռնապետական խնամակալութիւնը, իսկ Բիսմարկ, որքան էլ թունդ միապետական, չը կարողացաւ խոնարհվել գործունեայ և եռանդուն կայսրի կամքի առաջ և համդիսանալ իբրև լոկ նրա կամքի կատարող: Հրաժարականն անխուսափելի դարձաւ և Բիսմարկ ստիպվեց հնազանդել կայսրի կամքին... Այդ հրաժարականի լուրը ահագին, անօրինակ յուզմունք առաջ բերեց Եւրոպայում: Եւրոպան զգաց, որ ազատվում է իրան ճնշող երկաթէ ձեռքից:

Կայսրը շնորհեց նրան Լաուէնբուրգի դքսի և ֆէլդմարշալի տիտղոս ու արձակեց բոլոր պաշտօններից. Բիսմարկ առանձնացաւ Ֆրիդրիխսրուէի իր դղեակը և սկսեց այդտեղից հուր ու չանթ տեղալ նոր կանցլէր Կապրիվիի և Վիլհէլմ II-ի հռչակած «նոր կուրսի» դէմ. բայց երբ տեսաւ, որ իր ջանքերը ոչ մի ազդեցութիւն չեն գործում, երբ ամենքը համոզվեցին, որ առանց Բիսմարկի էլ Գերմանիան առաջ է գնում, խրոխտ, երկաթէ մարդը խոնարհվեց, բոլորովին առանձնացաւ և սկսեց Աստուածաշունչ կարդալ, մինչև որ նրա քաղաքական մահին, որ տեղի ունեցաւ 1890 թ-ի մարտի 20-ին, հետևեց այս տարվայ յուլիսի 19-ին նրա ֆիզիքական մահը...

—

Այժմ մի քանի խօսք Բիսմարկի մասին, իբրև մ ա ր դ ու: Երկաթէ կանցլէրն այն մարդկանցից չէ, որոնց մասին կարելի լինի սոսկ յայտնի առածը. «de mortuis aut bene, aut nihil»—մեռածների մասին կամ լաւ, կամ ոչինչ: Նրա գործունէութիւնն արդէն ենթարկվել է պատմական ամենաանխնայ քննադատութեան՝ դեռ նրա կենդանութեան ժամանակ: Նա վաղուց և իրաւամբ հռչակված է իբրև ե ր կ ա թ ի և ա ր ե ա ն մարդ. նա ոչ միայն անկոտրում, վճռական բնաւորութեան տէր մարդ էր, այլ և շատ անգամ անգութ և անսիրտ: Նրա համար հազարաւոր մարդկանց կեանքը ոչ մի նշանակութիւն չունէր, եթէ այդ կեանքը հարկաւոր էր իր նպատակին հասնելու համար: Նա կատաղում էր, երբ ֆրանկո-պրուսական պատերազմի ժամանակ զինուորական իշխանութիւնը՝ Ֆրիդրիխի հրամանով՝ մարդասիրութիւն էր ցոյց տալիս ֆրանսիացիներին: Այդ պատերազմի ժամանակ, երբ լուր ստացվեց, որ կամաւորների մի խումբ, Գարիբալդիի հրամանատարութեամբ, բաղկացած 13,000 հոգուց, գերի է բռնվել, Բիսմարկ գոչեց. «Ի՞նչքան ցաւալի է. 13,000 հոգի գերի են ընկել. ինչու նրանց գնդակահար չարին»: Երբ Ժիւլ Ֆավր գանգատվում էր Բիսմարկին, որ Պարիզի ռմբակոծութեան ժամանակ ռումբերը ընկնում են կ ո յ ր ե ր ի ապաստանի վրա, նա պատասխանեց. «Ի՞նչ էք գանգատվում. դուք ուժ էք արձակում մեր առողջ մարդկանց վրա»: Իսկ երբ Ֆավր ասաց՝ որ բուլվարներում մայրերը դեռ ման են գալիս իրանց երեխաների հետ, Բիսմարկ ասաց. «զարմանալի է, որ մինչև այժմ մայրերը չեն կերել իրանց երեխաներին»: Եւ այն ժամանակ, երբ կատաղի պատերազմի շնորհիւ, չորս կողմը կատարվում էր սոսկալի դրամա, երբ կոտորվում էին հազարաւոր մարդիկ, Բիսմարկ ամենայն սառնասրտութեամբ, Ռոտշիլդի գեղեցիկ վիլլայում, ըզբաղված էր լաւ ուտելով և լաւ խմելով...

—

Վերջացնելով կենսագրական այս տեսութիւնը, ընթերցողին ենք թողնում եզրակացութիւններ անել. մենք միայն կառաջարկենք համեմատել նրա կեանքը և գործունէութիւնը ժամանակակից մի ուրիշ գործչի՝ Գլադստօնի կեանքի և գործունէութեան հետ, և այն ժամանակ այդ եզրակացութիւնները աւելի խրատական կը լինեն: Պատմութիւնը դժուար թէ իրաւունք համարի «մ ե ծ մ ա ր դ» անունը յատկացնել Բիսմարկին, ինչպէս պահանջում են գերմանացի հայրենասէրները, թէև անկասկած, պատմութիւնը «երկաթէ կանցլէրին» կը համարի մեր դ ա ր ի հ ա ն ճ ա ր ե ղ ք ա ղ ա ք ա գ է տ և կը դասի նրան ոչ միայն Մաքիավելլիների, այլ նոյն իսկ Նապոլէոնների շարքում:

Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Յուլիսի 17-ին

Ուզում ենք մի թեթև պատկեր տալ մեր տեղական երիտասարդութեան կեանքից: Ինչով է հետաքրքրվում մեր երիտասարդութիւնը: Զանազան արկածներ, բուլվարական աննպատակ կեանք—ահա թէ ինչի ետևից են ընկած մեր նոր ուժերը: Ճշմարիտ է, պատահում են սրանց մէջ մի քանի մահկանացուներ, որոնք ներկայանում են լուրջ տիպեր, բայց սրանք պատահական անհատներ են, բացառութիւններ: Այդ աննպատակ կեանքն այն աստիճան զարգացած է, և այդ «աննպատակների» թիւն այնքան ստուար է, որ լուրջ մարդկանց գոյութիւնը սրանց շրջանում չի էլ նկատվում: Աչքի առաջ ունենալով սրանց մտաւոր սնանկութիւնը, հազիւ թէ արժանի լինէր այդ մարդկանց մասին երկար խօսել, բայց եթէ մենք մեր թղթակցութեան նիւթ ենք դարձրել այդ խնդիրն այն նպատակով է միայն, որ ցոյց տանք թէ ինչ մարդկանցից կախում ունեն մեր հասարակական և ազգային գործերը: Դրանով էլ պիտի բացատրել և մեր գործերի դանդաղկոտութիւնը և այն անհօրժալ երևոյթները, որ տեղի են ունենում մեր մէջ:

Օրինակներ էք կամենում. ահա: Նշանակվում են ընդհանուր ծխական ժողովներ, որտեղ պիտի քննվեն եկեղեցական խնդիրներ և դուք տեսնում էք, որ նոյն ժողովը երեք-չորս անգամ նշանակվելուց յետոյ հազիւ հազ կայանում է. իսկ մի և նոյն երեկոյ գնացէք զբօսատեղերը, այգիները,—այնտեղ նոյն երիտասարդներին կը հանդիպէք այնպիսի ուրախ և աշխոյժ տրամադրութեան մէջ, որ չէք ասիլ, թէ սրանք այդ տեղերից դուրս՝ «թմրած» մարդիկն են: Ուրիշ օրինակ: Վերջերս մեր քաղաքի համար ձեռնադրվեց մի քահանայ, որ իր ցենզով և պատրաստականութեամբ պիտի մեր մի քանի կրթված քահանաների թիւը մէկով աւելացնէր—սրանից էլ ուրախալի երևոյթ: Տարիների ընթացքում տեղի ունեցող տգէտ քահանաների հոսանքի առաջը մի անգամ ընդ միշտ առնված է և դա մեր տեղական կեանքում մի դարագլուխ պիտի համարվի: Բայց թէ որքան է այդ ուրախալի երևոյթը համակրութեան հանդիպում, ապացոյց այն, որ գտնվում են մարդիկ, որոնք կամենալով իրանց ինչ որ անձնական հաշիւները լուծել այն մարդկանցից, որոնք իսկապէս նախաձեռնողներ են առաջադիմութեան գործին,—աջ ու ձախ խօսում են՝ «թէ մեր տիրացուները մեզ եղան, չը ձեռնադրվեցին, թէ ձեռնադրվածին չենք ճանաչում, նա տեղացի չէ, թէ դրսից եկածների ձեռնադրելը տեղացիների համար վիրաւորական է»: Էլ չեն մտածում այդպիսիները, թէ քանի որ ներկայումս այստեղ սեմինարիան դեռ բացված չը լինելու պատճառով չը կան տեղացիներից համապատասխան քահանայացուներ, միակ ելքը մնում է դրսի օգնութիւնը: Ուրեմն ինչ անել, չը հրաւիրել. կրկին տգէտների լեգէօնը ստուարացնել... Մենք չենք զարմանում, ի հարկէ, այդպիսի բացասական դատողութիւնների վրա, բայց որ դրանք չեն դատափետվում մեր երիտասարդներից, չեն արժանանում սրանց արհամարհանքին—ահա այդ երևոյթն է, որ տալիս է խորհելու և մտածելու նիւթ: Այդ բոլորից յետոյ միթէ պիտի զարմանալ, որ հինը և փտածը կազմալուծում է մեր հասարակական կեանքը, առաջ են գալիս մարդիկ, որոնք ամեն գործի մէջ ուզում են առաջ տանել իրանց նեղ անձնական շահերը, բամբասանքի նիւթ է դառնում անաչառ ուղղութիւնը և բարի ձգտումը... Ինչ ուզում էք ասէք, որքան էլ անտարբեր ժամանակներում ապրենք, այնուամենայնիւ այդ երևոյթները զարմանալի պիտի համարել:

Յ. Սօլ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յուլիսի 26-ին

Շաբաթ օրը, յուլիսի 25-ին, կայացաւ հայոց դերասանական խմբի առաջին ներկայացումը՝ ի նպաստ դերասան Օհանեանի: Խաղացին Ալէքսանդրովի «Կեանքի խնջոյքում» դրաման: Այդ երեկոյ պ. Օհանեան՝ Վլադիմիր Խօտնեվի դերում՝ կարողացաւ բնական կերպով արտայայտել իր կնոջը խելագարի նման սիրող, սակայն վերջինիցս փոխադարձ սէր չը վայելող ազնիւ ամուսնու հոգեկան տանջանքներն ու վշտերը: Բենեֆիցիանտը հասարակութեան կողմից բուռն ծափահարութիւններ վաստակեց: Խօտնեվի կնոջ, Ելենայի դերում՝ օր. Վարդիթեր այս անգամ ցոյց տուեց, որ կարող է աւելի աջող խաղալ, եթէ աւելի ևս աշխատէ ուսումնասիրելու Ելենաների նման ռուս կանանց հոգեբանութիւնը: Այդ երեկոյ, օրիորդի խաղը լաւ անցաւ: Տիկին Զաբէլ՝ Ելենայի մօր-Ելիզաւետա Պաւլօվնայի դերը շատ վատ խաղաց: Տիկնոջ խօսակցութեան անդուրեկան ձևերը և ձայնը կեղծելու անբնականութիւնը հասարակութեան մէջ ծիծաղ էր առաջացնում: Ելենայի սիրահար՝ Վեաչեսլաւ Սիտինի դերում՝ պ. Պետրոսեան վատ չէր. սակայն պարզ նկատվում էր, որ այդ տեսակ դերերը նրա ամպլուայից դուրս են: Եւրոպականութեան հոտն առած, սակայն եւրոպական քաղաքակրթութիւնից զուրկ՝ անխիղճ և անազնիւ գործարանատիրոջ՝ Պաւել Դերգունովի դերը կատարում էր պ. Վրոյր, որը և չը կարողացաւ կենդանի կերպով ներկայացնել այդ օրինակ հազարաւոր մարդկանց տիպը: «Տօտիկների և թամթիկների» սիրահար ծերունի բարօնի դերում՝ պ. Յարութիւնեան լաւ էր. բայց ձայնն անդուրեկան կերպով էր կեղծում, որ անախորժ տպաւորութիւն էր թողնում: Հրէայ վաշխառու՝ Սենէվիչի դերը ստանձնել էր պ. Մելիք-Յովսէփեան, որն իր կլօունութիւններով փչացրեց դերը: Օղու և փողի սաստիկ սիրահար Սիդօրկա Գօրեմիկինի դերում՝ պ. Մամիկոնեան բաւական լաւ էր: Այդ երեկոյ թէ պիէսը և թէ գլխաւոր դերակատարները լաւ տպաւորութիւն արեցին հասարակութեան վրա: Բենեֆիցիանտը ընծայ ստացաւ... 43 րուբլի՝ հետն էլ թարմ ծաղիկներից կազմած մի գեղեցիկ փունջ: Թատրոնն ամբողջովին լի էր:

Թ.

ՆԱՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻՑ

—

Յուլիսի 27-ին

Կիրակի և տօն օրերին աշխատելը՝ Բալախանիում սովորական բան է: Եթէ ամբողջ Բալախանին պտտելու լինէք, մօտ հարիւր արհեստանոցներից հազիւ կը գտնէք երկու կամ երեք արհեստանոց, ուր կիրակի և տօն օրերին աշխատելիս չը լինեն. մնացած բոլոր տեղերում աշխատանքն անդադար շարունակվում է՝ լինի դա կիրակի օր, թէ եկեղեցական կամ կայսերական տօն: Արհեստաւորներն ամբողջ շաբաթ գիշեր ու ցերեկ շարունակ աշխատելուց յետոյ՝ ստիպված են աշխատել և՛ կիրակի օրերը, որովհետև, ինչպէս գործատէրերն են ասում, գործերը թափված են... մինչդեռ Կովկասեան II լեռնային շրջանի վարչութեան 1897 թ. դեկտեմբերի 11-ին հաստատված և հրատարակված կանոններով, կանոններ, որոնք վերաբերվում են հանքատէրերի և բանուորների փոխադարձ պարտականութիւններին և իրաւունքներին,—արհեստաւորներին կիրակի և տօն օրերին աշխատացնելն արգելվում է: Տօներից հաշվում են միմիայն եկեղեցական տօները, որոնց թիւը քսան և վեցի է հասնում և որոնք կանոնների մէջ մանրամասն...

րի դէմ և յետոյ վարվում վերջինների հետ ամենադաժան կերպով:»

Իր նպատակներին հասնելու համար կառավարութիւնը իր համար գլխաւոր գործիք ընտրեց Թօմաս Իուդկին Ֆիցջէրալդ անունով մի մանր հողատէրի, որից կարելի էր սպասել ամեն տեսակ անօրէնութիւն ու բռնութիւն: Եւ կառավարութիւնը չը սխալվեց high sheriff նշանակելով Ֆիցջէրալդին (պէտք է զանազանել դրան վերոյիշեալ հերոս Ֆիցջէրալդից), որ իր պաշտօնավարութեան առաջին օրից սկսեց կալանաւորել բոլոր կասկածի ենթարկված մարդկանց և մտրակի հարուածներով ու անմիջապէս կախաղան հանելու սպառնալիքներով ստիպել նրանց մեղադրանքներ բարդել ուրիշների վրա: Երբ որ այդ հրէշը եկաւ Իրլանդիա, նրա անունը այնպիսի սարսափ էր ազդում բոլորին, որ խեղճ գիւղացիները, որոնք գիտէին, որ նրա ձեռքին է իրանց վիճակը, ծունկ էին չոքում առջևը՝ նրա կառքը անցնելիս: Ահա նրա վարվելու եղանակի մի քանի նմուշներ շատ ուրիշների միջից, որոնք երևան եկան, երբ նրան դատի ենթարկեցին իշխանութեան սահմանից անցնելու համար,—դատ, որից նա, ինչ ասել կուզի, դուրս եկաւ ամենափայլուն կերպով արդարացած: Լեզուներ դաս տուող մի խեղճ ուսուցիչ, Վրայտ անունով, իմանալով, որ ինքը գտնվում է «կասկածելիների» թւում, ներկայանում է Ֆիցջէրալդին, որ նրան հանդիպում է հետևեալ խօսքերով—«չոքիր և լսիր քո դատավճիռը»: Յետոյ դատաւորը յայտնում է նրան—«դու ապստամբ ես. քեզ հինգ հարիւր հարուած կը տամ մտրակով և յետոյ գնդակահար կանեմ»: Խեղճ ուսուցիչը այնքան անզգոյշ է լինում, որ սկսում է խնդրել յետաձգել պատիժը և կիսաձայն արտասանում է «քննել», այն ժամանակ նրան անմիջապէս յանձնում են դահիճներին: Սակայն մինչև դահիճների բռնելը դատաւորը յարձակվում է նրա վրա, սկսում է քաշքշել մազերից և ծակոտել մարմինը թրով: Այնուհետև դահիճը սկսում է իր գործը. երբ նա արդէն յիսուն հարուած տուած է լինում, ներս է մտնում անգլիացի մայօրը և հարցնում է, թէ ինչ յանցանք է գործել Վրայտը: Ի պատասխան դրան՝ ցոյց են տալիս նրան յանցապարտի մօտ գտնված մի ֆրանսերէն տոմսակ, որի բովանդակութիւնը ոչ ոք չէր կարողացել հասկանալ: Դուրս է գալիս, որ այդ տոմսակով աշակերտներից մէկը յայտնում է նրան, թէ չէ կարող նշանակված ժամին գալ դասի: Մայօրը սկսում է հաւատացնել դատաւորին, որ տոմսակը շատ անմեղ բովանդակութիւն ունի. չը նայելով դրան մտրակի հարուածները շարունակում են, մինչև որ ողորմելի զոհի մսի պոկ եկած կտորների տակից սկսում են երևալ փորոտիքը: Այն ժամանակ դահիճը հրաման է ստանում հարուածները ուղղել մարմնի այն մասերին, որոնց դեռ չէր դիպել մտրակը: Այդ դէպքը այն դէպքերի թւից էր, որոնք ամենից մեծ ուշադրութիւն գրաւեցին իրլանդական բարձրագոյն դատաւորի դատի ժամանակ,—դատ, որ Մասսէյի ասելով, թերի կը լինէր, եթէ իբրև վկայ կանչված մի բողոքական պաստոր երդմամբ հաստատած ցուցմունքի ժամանակ չը պնդէր, թէ Ֆիցջէրալդը մեղմ և մարդասէր մարդ է,—Ֆիցջէրալդը, որին ամենքը ճանաչում էին իբրև արիւնարբու դատաւորի, որին ժողովուրդը անուանում էր Խ ա ր ա զ ա ն—Ֆիցջէրալդ: Այդ դատը երկիւղալի չէր կարող լինել ի հարկէ այդ Խ ա ր ա զ ա ն ի համար: Ի հաճոյս նրա և ի խախտումն սահմանադրութեան, նրա պաշտօնավարութեան սկզբում և եթ, կառավարութիւնը օրէնք էր հրատարակել, որով թոյլ էր տրվում տանջանքներ գործ դնել քննութեան ժամանակ, ուստի նրա համար դժուար չէր հերքել բոլոր մեղադրանքները: Չը լսված անամօթութեամբ պարծենում էր նա դատարանում, թէ շատ անգամ ինքը գործ է դրել աւելի ևս դաժան մտրակահարութեան պատիժներ, քան այն, որոնց պատճառով այդքան աղմուկ են բարձրացնում, և ինքը պատմեց, թէ ինչպէս մի թշուառ մարդ անձնասպանութիւն գործեց տանջանքի սարսափներից ու խայտառակութիւնից ազատվելու համար: Պէտք է այն էլ յիշել, որ ի վարձատրութիւն իր մատուցած ծառայութիւնների նա կենսաթոշակ ստացաւ, իսկ յետոյ, երբ Կէսալրին իրագործեց Իրլանդիայի և Անգլիայի միացման ծրագիրը, արժանացաւ «միացեալ պետութեան բարօնի» աստիճանին:

Ապստամբութիւնը ճնշելու համար գործ դրված միջոցներից միմիայն մի օրինակ էլ կը բերենք, որպէս զի ընթերցողի համար միանգամայն պարզ լինի, թէ ինչ տպաւորութիւնների տակ էր այրական հասակն անցնում Թօմաս Մուրը, որ այն ժամանակ 18 տարեկան էր: 1798 թ., մի աշնանային երեկոյ, ժանդարմները Վօլլագան անունով մէկի առաջնորդութեամբ մտան կասկածեալների թւին պատկանող Դօգէրտի անունով բանուորի տունը—Դէլգարի գիւղում—և հարցրին, թէ արդեօք չի պատսպարվել այնտեղ արիւնռուշտ ապստամբներից մէկն ու մէկը: Տանը ոչ ոք չը կար բացի Դօգէրտիի կնոջից և մի հիւանդ տղայից, որ նրա որդին էր: Վօլլագանը հարցրեց, տանտիրոջ որդին չէ՞ արդեօք այդ տղան, և, դրական պատասխան ստանալով, բացականչեց. «Ուրեմն դու պէտք է մեռնես, շան ձագուկ»: Մանուկը սկսեց աղաչել, որ գթան իրան: Հայհոյանքների տարափ տեղաց նրա գլխին և ենթասպան երկու անգամ ուղեց արձակել հրացանը, բայց երկու անգամն էլ հրացանը չը բացվեց: Ընկերներից մէկը մի ուրիշ հրացան տուեց նրան, երեխայի մայրը չոքեց զաւակի առաջը, որպէս զի իր մարմնով պաշտպանի նրան, բայց գընտակը փշրեց փոքրիկ Դօգէրտիի կուռը: Երբ որ երեխան վայր ընկաւ, մարդասպանները դուրս եկան խրճիթից: Բայց Վօլլագանը մի փոքր յետոյ վերադարձաւ և, տեսնելով, որ մայրը կռացել է երեխայի վրա, բացականչեց. «Այդ ինչ է, միթէ այդ շան ձագուկը դեռ չի մեռել:—«Տէր Աստուած, պատասխանեց թշուառ կինը, էլ ինչ էք ուզում. նա բաւականաչափ մեռած է արդէն»:—«Չէ. վախենում եմ, որ դեռ բաւականաչափ չէ», առարկեց Վօլլագանը, «ահա այս էլ թող վերջինը լինի»: Այդ ասելով նա կրակեց չորրորդ անգամ և երեխան մահացած ընկաւ մօր կռների վրա: Երբ որ յետոյ Վօլլագանին դատի ենթարկեցին իր իշխանութեան

մասն նշանակված են: Սակայն լեռնային վարչութիւնն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանքերում շարունակ պատահում են այնպիսի գործեր, որոնց շուտափոյթ կատարելը միանգամայն անհրաժեշտ է խոշոր վնասներից ազատվելու համար, թոյլ է տալիս հանքատէրերին, կիրակի և տօն օրերին արհեստաւորներ աշխատեցնելը, միմիայն մէկ ու կէս անգամ աւելի վճարով, և այն էլ ոչ թէ միշտ մի և նոյն արհեստաւորներից, այլ հերթով՝ այս կիրակի մի խմբի, միւս կիրակի կամ տօնին մի ուրիշ և այսպէս շարունակ, որոնց ցուցակը տօների նախընթաց օրը պէտք է անպատճառ կախված լինի արհեստանոցում: Եւ ահա այժմ, մեր արհեստանոցների տէրերը օգուտ քաղելով կանոնների այս կէտից, շուտափոյթ գործերի պատրուակով, արհեստաւորներին կիրակի և տօն օրերին շարունակ աշխատեցնում են: Աշխատանքները շարունակվում են մի տեղ մինչև կէսօր, միւս տեղ մինչև երեկոյ և շատ անգամ և գիշերները... և ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում դրա վրա: Որքան մենք կարողացանք իմանալ, ոչ մի կարգին արհեստաւոր հեշտութեամբ չէ հաշտվում կիրակի օրերը բանելու մտքի հետ, բայց ստիպված է աշխատել, որովհետև ամեն տեղ այդպէս է... Պարտք ենք համարում Կովկասեան II շրջանի լեռնային վարչութեան ուշադրութիւնը հրաւիրել այս փաստի վրա:

Մ. Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 30-ին

Դրդված ոչ թէ պաշտպանվելու զգացմունքից, այլ այն խորին յարգանքի զգացմունքից, որ ես, իբրև գրչի մարդ, տածում եմ դէպի մամուլը՝ թոյլ եմ տալիս ինձ՝ ընթերցող հասարակութեան առաջ դնելու հետևեալ բնորոշ փաստերը:

Սրանից մի քանի ամիս առաջ, Էմիլ Զօլայի դատի ամենատաք ժամանակը, «Մշակի» մէջ տպած մի յօդուածում ես այն կարծիքը յայտնեցի, որ հայոց մամուլը, իբրև գլխաւորապէս գ ա ղ ա փ ա ր ի ծառայող մամուլ, չը պէտք է յարձակվի Զօլայի վրա, որը ներկայ դէպքում գ ա ղ ա փ ա ր ի անպայման զինուոր է, ինչպէս արեց, օրինակ, «Մուրճ» ամսագիրը՝ թոյլ տալով իրան բռնել ա ր դ ա ր ո ւ թ ե ա ն բերանը փակող կառավարութեան կողմը, և յարձակվել նշանաւոր գրողի մաքուր ձգտումների դէմ:

Ի՞նչ պատասխանեց «Մուրճը»: Անկասկած, նա կատարեալ իրաւունք ունէր պնդելու իր, իմ կարծիքով, ամօթալի մտքերի վրա, և ցոյց տալ, որ ես չարաչար սխալվում եմ: Բայց նա այդ անելու փոխարէն, տպագրեց մի հայհոյական նամակ, վերջացնելով նրանով, որ ես խ ե ն թ եմ: «Ըստ կարելոյն շուտով դիմել մի հոգեկան բժշկի օգնութեանը»,—ահա հայոց ամսագրի ինձ տուած պատասխանը («Մուրճ» № 2-3):

Համարելով այդ փաստը իբրև բ ա ց ա ռ ի կ անմտութիւն, ես լռեցի. բայց ահա մի երկու ամիս անցած, նոյնը կրկնվեց հայոց մի ուրիշ թերթի մէջ: Քահանայական հարցի առիթով, ինչպէս գիտեն ընթերցողները, ես այն կարծիքը յայտնեցի, որ ա յ ժ մ ե ա ն պ ա յ մ ա ն ն ե ր ո ւ մ անօգուտ եմ գտնում ինտելիգէնտ մարդկանց հոգևոր կոչում ընդունելը, քանի որ այդ ասպարէզում ջլատվում են ազնիւ և օրինաւոր գործիչի բոլոր ոյժերը: Այդ առիթով ծագեց մի երկար և տաք բանակռիւ «Մշակի» էջերում, որ անցաւ հայոց մամուլի ուրիշ օրգանների, նոյն իսկ Կ. Պօլսի լրագիրների էջերը, և, ինչպէս երևում է, դեռ երկար պիտի տևի: Իմ մտքին հակառակողներ շատերը գտնվեցին, բայց գտնվեցին և շատերը հայոց ինտելիգէնցիայի մէջ, որոնք ոչ միայն համաձայն են իմ յայտնած տեսակէտին, այլ և աւելի հեռու են գնում... Եւ այդ հասկանալի է.—քննութեան նիւթ եղող հարցը այնպիսի հարցերից է, որոնց մասին անթիւ կարծիքներ կան, և ամեն մարդ ազատօրէն կարծիք է յայտնում, առանց խ ե լ ա գ ա ր կոչվելու վտանգին ենթարկվելու: Բայց ահա Թիֆլիսի հայոց մի թերթ, որի անունը չէ ընդունված յիշատակել, փոխանակ հերքելու իմ միտքը, տպագրեց մի հայհոյական նամակ, և à la «Մուրճ» եզրափակեց, որ ես խ ե ն թ եմ: «Շատ շուտով պէտք կը լինի մտածել առաջադէմ և ազատամիտ գաղափարներ դաւանողների համար կենտրօնական խենթանոցներ հիմնարկել: Կամայ ակամայ ես այդ եզրակացութեան եմ գալիս, կարդալով Մալումեանի գրածը»,—ասում է այդ թերթի յօդուածագիրը (№ 127):

Դուրս է գալիս ուրեմն, որ Զօլայի կողմնակից լինելը, կամ հոգևորականութեան դէմ կռվելը՝ խ ե ն թ ո ւ թ ի ւ ն է, և այլն: Արասխանեանի և Սպանդարեանի կարծիքով, այդպէս մտածողներին պէտք է խ ե ն թ ա ն ո ց տանել: Ինչքան էլ մենք, հասարակութեան հետ միասին, աննպաստ կարծիք ունենանք այդ երկու խմբագիրների մասին, բայց այնքան միամիտ չը պիտի լինենք, որ կարծենք, թէ յիրաւի նրանք այնքան թոյլ մտածողութիւն ունեն, որ դա նրանց անկեղծ կարծիքն է կազմում: Հասարակ ընթերցողն անգամ գիտէ, որ Զօլային այս րոպէիս էլ պաշտպանում են այնպիսի հռչակաւոր մարդիկ, որոնց կօշիկների կապերը քանդելու անգամ արժանի չեն հայկազեան այդ երկու խմբագիրները. իսկ հոգևորականութեան դէմ նոյն իսկ հայոց գործիչների շարքերի մէջ այնպիսի կռուողներ են եղել, որոնց աշակերտ լինելու պատուին անգամ արժանի չեն մի Արասխանեան, կամ մի Սպանդարեան: Դա ուրիշ բան չէ, բայց եթէ այդ մարդկանց բարոյական անկման մի-մի նոր ապացոյց:

Յիշում էք դուք, ընթերցող, ամերիկացու պատասխանը կաթօլիկ եզուիտ քահանային, որը քարոզում էր Նոր-աշխարհի բնիկին երկնային արքայութեան գեղեցկութիւնները. «Տէր հայր, ասացէք, խնդրում եմ, հարցրեց ամերիկացին, դուք էլ այն արքայութեան մէջ պիտի լինիք»:—«Ի հարկէ, որդիս», պատասխանեց կաթօլիկ եզուիտը:—«Եթէ այդպէս է, ես գերադասում եմ դժոխք գնալ, քան թէ այն արքայութիւնը, որտեղ դուք պիտի լինիք»—վրա բերեց յուզված ամերիկացին:

Նոյն պատասխանը կը տամ ես խմբագիրներ Արասխանեանին և Սպանդարեանին. «Ես, պարոններ, գերադասում եմ խ ե ն թ ա ն ո ց մտնել, քան թէ այն խ ե լ օ ք ա ն ո ց ը գնալ, որի մէջ բազմած են Արասխանեաններ և Սպանդարեաններ»...

Խ. Մալումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի կառավարչապետ իշխան Գօլիցին յուլիսի 29-ին Թիֆլիսից ուղևորվեց Բօրժօմ, որտեղից պիտի գնայ Աբասթուման:

—

Մենք արդէն տպագրեցինք մի քանի թղթակցութիւններ Վանից, որոնք ցոյց են տալիս, թէ կրօնափոխութիւնը շատ տարածված է Վասպուրականում: Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են հետևեալ լուրը, որ հաստատում է այդ. «Աղթամարի կաթողիկոսական փոխանորդ Արսէն վարդապետ՝ Սպարկերտի մէջ տեղի ունեցած կրօնափոխութիւնները ծանուցանելով, կառավարական հրամանագիր մը խնդրած է, որպէս զի թեմերն այցելելով հարկ եղած միջոցները ի գործ դնէ կրօնափոխութեանց առաջքը առնելու համար: Վարդապետը երկրորդ գրով մը Աղթամարի հայոց կարօտ վիճակը յայտնելով՝ դարման և օգնութիւն խնդրած է Պատրիարքարանէն»: Իսկ պատրիարքարանը «դարման», ի հարկէ չէ տալիս:

—

Խարկով քաղաքում լոյս տեսնող «Южный Край» լրագիրը թոյլտւութիւն է ստացել հրատարակվել առանց ն ա խ ն ա կ ա ն գրաքննութեան: Սա երկրորդ գրական-քաղաքական լրագիրն է, որ ստացել է այդպիսի արտօնութիւն գ ա ւ ա ռ ո ւ մ: Առաջին օրինակը, ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ Կիևում:

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ յուլիսի 29-ին Թիֆլիսից Պարսկաստան ուղևորվեց Երևանի և Ջուլֆայի վրայով ռուսաց կառավարչական կրօնական միսիան, որ պաշտօն ունի ընդունել ուղղափառ եկեղեցու գիրկը մօտ 50,000 ասորի-նեստորական ընտանիք, համաձայն նրանց յայտնած ցանկութեան: Այդ միսիայի հետ, որ բաղկացած է մի վարդապետից և մի քահանայից, գնաց Ուրմի նաև Մար Եօն ասորի եպիսկոպոսը, որ նորերս Պետերբուրգում ընդունեց ուղղափառութիւն: Երկաթուղու կայարանում հաւաքվել էին աւելի քան 1000 ասորիներ՝ ճանապարհ դնելու միսիայի անդամներին:

—

«Մասիս» լրագրի մէջ կարդում ենք. «Տիարպէքիրի ասորիներու եպիսկոպոսը բողոքագիր մը գրկած է Պատրիարքարան, յայտնելով որ Եղիա անուն վարդապետ մը՝ երկու իրարու ազգական ասորիներ հայ եկեղեցւոյ արարողութեամբ պսակեր է. միւս կողմէ Տ. Եղիա վարդապետ բացատրութիւն տուած է, թէ իր պսակածները ազգական չեն իրարու և թէ Տիարպէքիրի մէջ հայ եկեղեցականներ առաջուց ի վեր ասորիներ պսակած են: Կրօնական ժողովը՝ որուն ուշադրութեան յանձնուած էր այս խնդիր, որոշած է գրել Տիարպէքիրի առաջն. տեղապահին, թէ հայ Եկեղեցիի չվերաբերող անհատներու վրայ այլ ևս պսակ չկատարէ»:

—

Ներքին գործերի մինիստրութիւնը մտադիր է փոփոխութիւններ մտցնել գ ի ւ ղ ա կ ա ն բ ա ն կ ե ր ի կազմակերպութեան մէջ: Գիւղական բանկերի կանոնադրութիւնը, որ մշակված և հաստատված էր 1895 թւին, կեանքի մէջ պակասութիւններ ցոյց տվեց: Մինիստրութիւնն այժմ ցանկանում է իմանալ, թէ ինչ բարեփոխութիւններ ցանկալի է մտցնել կանոնադրութեան մէջ: Այդ նպատակով նա դիմել է նահանգապետներին՝ խնդրելով նրանց կարծիքը:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 20-ին քաղաքում լուր տարածվեց, որ մի պարոն վերցնելով կապալով անտառները՝ ցանկանում էր ածուխը մենավաճառութեան ենթարկել, որպէս զի գաւառում միայն ինքն ածուխ ծախէ: Բայց որովհետև առանց ածուխի մեր ժողովրդի մեծամասնութիւնը չէ կարող ապրել, չունևոր դասը, որ միջոց չունի վառարան վառելու, պահում է մ ա ն ղ ա լ և այդպիսով ձմեռը «եօլա գնում», այդ պատճառով, շատերը վշտացած այդ անխիղճ քայլից, գանգատվեցին քաղաքագլխին: Քաղաքագլուխը, լսելով արհեստաւորների արդար բողոքը՝ կարգադրեց ածուխը չամբարել, այլ ծախել ամեն օր պուդը 35 կոպ. և ոչ աւելի: Այդ գինը թէ ծախողին և թէ առնողին ձեռնտու է. բայց տեսնենք այդպէս կը մնա՞յ, թէ կապալառուն գինը կը բարձրացնէ»:

—

ՇՈՒՇՈՒՑ մի պարոն հետևեալ կարծիքն է ուղարկել մեզ տպելու համար. «Ինչպէս յայտնի է, սկզբունքով վճռված է Կովկասում պօլիտեխնիկում բանալ: Աւելորդ համարելով խօսել պօլիտեխնիկումի մեծ նշանակութեան մասին կովկասցիներիս մտաւոր և տնտեսական առաջադիմութեան տեսակէտից՝ անցնենք վիճաբանութեան առարկայ այն հարցին, թէ որտեղ բացվի ապագայ պօլիտեխնիկումը: Մենք համոզված ենք, որ Շուշին էլ՝ որ ունի իր մէջ րէալական դպրոց և բաւական ուսանողներ է տալու ապագայ պօլիտեխնիկումին՝ միանալով Երևանի կարծիքի հետ, գերադասութիւնը անկասկած կը տայ Թիֆլիսին, որը ներկայանում է իբրև ամենայարմար տեղ ապագայում բացվելիք պօլիտեխնիկումի համար: Թիֆլիսը իր կլիմայով, ապրուստի էժանութեամբ, իր միջնակարգ դպրոցներով՝ որտեղից նա անշուշտ բաւական մեծ թւով ուսանողներ է տալու պօլիտեխնիկումին, մի խօսքով ամեն տեսակ յարմարութիւններով կարող է մրցել Բագուի և Վլադիկավկազի հետ: Կովկասցիների կողմից անհեթեթութիւն է նոյն իսկ ուրիշ տեղ աչքի առաջ ունենալ պօլիտեխնիկումի բացման համար, բացի Թիֆլիսից»:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Հունձը, հնարհիւ մայիս-յունիս ամիսներում եկած յորդ անձրևների, այնքան աչող և առատ է, որ շատ գիւղացիներ ուրախացած ասում են՝ «30 տարի է այսպէս հունձ չենք տեսել»: Յիրաւի, արևմտեան Շիրակում աչողին քանակութեամբ հաց կայ. թէ գարին, թէ ցորենը և թէ կտաւհատը շատ առատ է: Ցանկանք միայն, որ անվնաս քաղվի և ազատ մնայ կարկուտից կամ ուրիշ պատահարներից: Այս տարի շիրակցի երկրագործը յոյս ունի, որ հացի նեղութիւն չի ունենայ: Քաղաքում ամեն ինչ առատ է և էժան, միայն յուլիսի սկիզբներին ժողովուրդը շատ նեղութիւն քաշեց հացի համար. պատճառն այն էր, որ մեր քաղաքային վարչութիւնը հացի գինը իջեցրեց 3 կոպէկից $2^1/_2$ կոպէկի, և հացագործներից շատերը հրաժարվեցին հաց թխել, որովհետև այդ գնով ալիւր ձեռք բերել չէր կարելի: Նոյն իսկ այսօր ալիւրը ծախվում է պուդը 1 ր. 20 կոպ.: Եւ այդպիսով 10—15 օր հաց չէր կարելի առ-

---

լիազօրութիւններից սահմանազանց լինելու համար, նրա փաստաբանը առաջ էր բերում այն հանգամանքը, որ մեղադրեալը և իր ընկերները «ընդհանուր հրահանգ ունէին գնդակահար անելով պատժել կասկածեալներին, երբ որ կամենային»: Դատաւորները ոչինչ արտասովոր կամ՝ առողջ դատողութեան հակառակ բան չը գտան այդպիսի մի հրահանգի մէջ: Նրանք հաստատեցին այն փաստը, որ «մեղադրեալ Վօլլագանը գնդակահար է արել ապստամբ Թօմաս Դօգերտիին», բայց վճռեցին, որ նա մեղաւոր չէ «սպոր կամ նախամտածված սպանութիւն գործելում»:

Այդպիսի միջոցներով վերահաստատվեց հանգստութիւնը Իրլանդիայում և ժողովուրդը նախապատրաստվեց հանդիսատես լինելու այն բռնափոխութեան, որի մէջ էր տեսնում իրլանդական դժուարութիւններից դուրս գալու միակ ելքը նուրբ դիւանագէտ լօրդ Կէստլրին,—Դուբլինի ինքնուրոյն պարլամենտը վերացնելուն և Լօնդօնի պարլամենտի հետ միացնելուն: Այժմ պէտք էր յաղթել վերջին արգելքին, որ կայանում էր նոյն իսկ իրլանդական պարլամենտի մէջ, որ թէև մեծ մասամբ անազնիւ մարդկանցից էր բաղկացած, սակայն ցոյց չէր տալիս բաւականաչափ հլու հպատակութիւն: Կէստլրին, որ այն ժամանակ Իրլանդիայի գ լ խ ա ւ ո ր պ ա շ տ օ ն ե ա ն էր և ըստ երևոյթին մեծ կարծիք չունէր իր բողոքական հայրենակիցների մասին, մի շատ հասարակ միջոց գտաւ դրա դէմ,—սկսեց մի առ մի կաշառել դիմադրական կուսակցութեան անդամներին: Այն բոլոր պաշտօնական գրութիւններում, որ նա ուղարկում էր կառավարութեան 1799 թ. սկզբից մինչև 1800 թ. (երբ տեղի ունեցաւ միացումը), նա անխուսափ կերպով պաշտպանում էր իր ծրագիրը և ի պատասխան այդ գրութիւնների ստանում էր դրամական գումարներ, որոնք փոքր առ փոքր հասնելով մինչև մէկ ու կէս միլիոն ֆունտ ստեռլինգի, գործադրվեցին ամենագործնական կերպով: Պարլամենտի անդամ սակաւաթիւ իրլանդացի պատրիոտները յուսահատված դիմեցին միակ միջոցին, որ, ըստ երևոյթին, կարող էր փոքր ի շատէ նպաստել նրանց գործին,—վճռեցին միացման հարցի մասին վիճաբանութիւններ լինելու օրը յանկարծ պարլամենտ բերել վաղուց արդէն լռած, բայց դեռ ազգից պաշտվող և այժմ վտանգաւոր կերպով հիւանդ Գրատտանին: Այդ միտքն ի կատար ածեցին զուտ իրլանդական սիրով դէպի դրամատիկական էֆֆէկտները: Մի քանի օր դրանից առաջ պարլամենտի տեղերից մէկն ազատվել էր: Իսկոյն առանց աղմուկի Գրատտանին ընտրեցին անդամ այդ թափուր տեղի համար: Այն կալուածատէրը, որի հողում կատարվել էին ընտրութիւնները, արագարշաւ սլացաւ Դուբլին, այնտեղ նրանց հետևանքները յայտնելու համար: Նա Դուբլին հասաւ առաւօտեան ժամի 5-ին: Ազգասէրներն իսկոյն գնացին Գրատտանի տունը, հանեցին ուժասպառ հիւանդին անկողնից, փաթաթեցին վերմակի մէջ և բազկաթոռի վրա նստացրած տարան պարլամենտական նիստերի դահլիճը: Այնտեղ տասն և հինգ ժամ և ամբողջ գիշերն անընդհատ տևած վիճաբանութիւններից յետոյ կիսանինջ անդամները յանկարծ առաւօտեան մօտ 7 ժամին սթափվեցին՝ տեսնելով Գրատտանին, որ ուրուականի նման երևաց դահլիճի շէմքի վրա: Այդ—1782 թւականի մարդն էր, իրլանդացիներից ազգ ստեղծող մարդը, որ այժմ դագաղի միջից վեր էր կացել, իբրև իր ազգի մեռնող խղճի մարմնացումն, որպէս զի վերջին բողոքը յայտնէր ի պաշտպանութիւն նրա անկախութեան: Նա վերջացրեց իր ճառն ասելով, որ եթէ նոյն իսկ հոգեվարքի մէջ տանջվելիս լինէր, այնու ամենայնիւ իր վերջին շունչը գործ կը դնէր քննութեան ենթակայ առաջարկութեան դէմ բողոքելու համար, իսկ երբ ելևմուտքի պաշտօնեայ Կորրին համարձակվեց առարկել այդ խօսքերին պետական դաւաճանութեան մեղադրանքով, Գրատտանը նրան կոչեց մենամարտի, որ և տեղի ունեցաւ մի քանի օր յետոյ: Կորրին այնքան բախտաւոր գտնվեց, որ վէրք ստացաւ թևին, ապա թէ ոչ, եթէ ինքը յաղթող դուրս գար այդ մենամարտից, ժողովուրդն անշուշտ նրա մեծ կտորն ականջը կը թողնէր: Սակայն նոյն իսկ Գրատտանը անզօր գտնուեց կառավարութեան գործ դրած հնարքների դէմ: Նրա պերճախօսութիւնը, որ Մուրը համեմատում էր թանկագին ակների փայլի ու կարծրութեան հետ և որի մէջ Բայրընը գտնում էր ոչ միայն Դեմօսթենի բոլոր արժանաւորութիւնները, այլ և այն բոլոր արժանաւորութիւնները, որոնք պակասում էին Դեմօսթենին,—արձագանք չը գտաւ: Այն օրը, երբ քննվում էր միացման ծրագիրը, պարլամենտի վերնատունը լի էր հասարակութեամբ, որ հետևում էր վիճաբանութիւններին ահով և լարված ուշադրութեամբ: Բայց Կէստլրին, որի համար անկասկածելի էր քուէարկութեան ելքը, սպասում էր հետևանքին հանգիստ և ժպտաշուրթ: Երբ որ նախագահը ծորաձայն արտասանեց,—«Թող նրանք, որոնք միացման կողմն են, բարձրացնեն ձեռքերը»,—և տեսաւ, թէ ինչպէս ձեռքերը մէկ մէկի յետևից բարձրանում էին վերև դանդաղ և ամօթխած կերպով, մի րոպէ կանգնած մնաց՝ անշարժ, ինչպէս արձան, և վերջապէս յայտարարեց,—«միացումը հաստատվեց» ու ընկաւ աթոռի վրա սարսափի և յուսահատութեան արտայայտութեամբ: Այն ժամանակ, երբ այդ փոթորկալից վիճաբանութիւնների մէջ Իրլանդիայի լաւագոյն զաւակները յայտարարում էին, թէ այսուհետև դիմադրութիւնը և ապստամբութիւնը պարտականութիւն պէտք է համարվեն իւրաքանչիւր իրլանդացու համար, ունկնդիր բազմութեան մէջ նստած էր գունատ դէմքով և փայլուն աչքերով մի պատանի, որի մէջ ուրիշների պարապ խօսքերը կենսական պահանջ էին դառնում և որ այդ օրը իր հոգու խորքում ուխտեց ազատել իր հայրենիքը բռնութիւնից:

Այդ երիտասարդը Իրլանդիայի ամենազնիւ և ամենաընտիր զաւակն էր, Ռօբէրտ Էմմէտը, որի ազդեցութեանը պէտք է վերագրել, մեր կարծիքով, այն բոլորը, ինչ որ հզօր է և բուռն յափշտակութեամբ համակված՝ Թօմաս Մուրի «Իրլանդական մեղեդիների» մէջ:

Տ. Յովհաննիսեան

նել առանց ղալմաղալի: Այժմ հացագործները յոյս ունեն, որ այս ամսին կրած վնասը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կը հանեն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

«Կայսր Վիլհելմ II, Նորվեգիա գնալուց առաջ, եռամիշում բանակցութիւններ ունեցաւ սուլթանի և նրա մերձաւորների հետ: Դրանով են բացատրում այն յամառութիւնը, որով Բ. Դուռը փորձում է դրականապէս մերժել Ռուսաստանի արդար պահանջները և հրաժարվում է բաւարարութիւն տալ ֆրանսիական այն հպատակներին, որոնք վնասներ են կրել Կ. Պոլսի հայկական անկարգութիւնների ժամանակ: Լաւ է որ ֆրանսիական կառավարութիւնն իր ձեռքում դրամական ապահովութիւն ունի, որի օգնութեամբ նա կը հարկադրէ Բ. Դրան վճարել այն, ինչ որ պարտ է. բայց եթէ այդպիսի ապահով միջոց չը լինէր, Ֆրանսիան հարկադրված կը լինէր ձեռք առնել ստիպողական միջոցներ: Սուլթանն այդ դէպքում կը դիմէր գերմանական կառավարութեան օգնութեան և Վիլհելմ II, հետևողական լինելու համար, պիտի պաշտպանէր Թիւրքերին: Այսպիսով կարող էր բռնկվել պատերազմ մի բոլորովին ոչինչ պատճառով: Այդ բոլորի պատճառն այն է, որ Գերմանիան ձգտում է մեծացնել իր առանց այդ էլ տիրապետող ազդեցութիւնը Կ. Պոլսում:

«Թիւրքիա ուղարկված գերմանական օֆիցերները նեւ կայացրին Թիւրքաց զինուորական մինիստրին մի ծրագիր՝ Թիւրքաց պահեստի զօրքը 170 բատալիօնով աւելացնելու մասին. դրանցից պատերազմի ժամանակ կարելի է կազմակերպել տասը և կէս դիվիզիա: Այդ ծրագիրն այժմ արդէն ի կատար է ածվում: Նոյն գերմանական յանձնաժողովը մի քանի ծրագիր է մշակել Երզրումի մօտ խիստ ամրացրած զինուորական բանակ կազմելու մասին: Բայց նախ քան այդ բանն իրագործելը, անհրաժեշտութիւն կայ կապել Երզրումը Կ. Պոլսի հետ երկաթուղով Անգօրայի և Դիարբէքիրի վրայով: Գերմանական ռազմագէտները երկիւղ են կրում որ պատերազմի ժամանակ Ռուսաստանը կը կտրէ Երզրումի հաղորդակցութիւնը Տրապիզոնի և Սև ծովի վրայով: Թիւրքաց կառավարչական շրջաններում, սակայն, յոյս ունեն որ անգլիացիները օսմանեան կայսրութեան կողմը կանցնեն և կոչնչացնեն Սև ծովի ռուսաց նաւատորմը»:

(«Нов.»)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բեռլինի Թիւրքաց դեսպանը, ինչպէս հաղորդում է «Journal des Débats» լրագիրը, դիմեց գերմանական կառավարութեան խորհուրդ հարցնելով, թէ ինչպէս վարվել և ինչ անել երբ Ֆրանսիան, Ռուսաստանը, Անգլիան և Իտալիան թոյլ չեն տալիս, որ Թիւրքաց զօրքը ափ իջնի Կրետէում: Գերմանական կառավարութիւնը խորհուրդ տուեց Բ. Դրան հպատակվել մեծ պետութիւնների որոշման և բաւականանալ միայն բողոքով:

—Բալկանեան անկախ պետութիւնները—Սերբիան, Չերնոգորիան և Բուլղարիան կամենալով վերջ դնել Թիւրքիայի ուլաքեան նահանգների մէջ տեղի ունեցող անընդհատ հարստահարութիւններին, դիմեցին Բ. Դրան, պնդելով, որ ռէֆորմներ մտցնվեն Հին-Սերբիայում, Մակեդոնիայում և Օդրինի վիլայէթում: Թիւրքիան խոստացաւ կատարել այդ պահանջը և իսկոյն հրահանգներ ուղարկեց վալիներին, բայց, ի հարկէ, իր խոստումները երբէք չիրագործելու դիտաւորութեամբ:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԱՄԵՐԻԿՕ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

ՄԱԻՐԻԴ, 29 յուլիսի: «Liberal»-ի տեղեկութիւններին նայելով, կառավարութիւնը ընդունում է Միացեալ-Նահանգների պայմանները ad referendum, բայց որում ենթադրում է, որ պատգամաւորների ժողովի հաւանութիւնը անհրաժեշտ է տերրիտորիա զիջանելու համար: Եթէ Մակ-Կինլէյ մերժէ ad referendum-ի պայմանը, այն ժամանակ կառավարութիւնը կորտէսները կը գումարի օգոստոսին:

ՄԱԴՐԻԴ, 30 յուլիսի: Շատերը այն անձերից, որոնց հետ Սագաստան խորհրդակցեց, այն կարծիքը յայտնեցին, որ խաղաղութեան բանակցութիւնները վարելու համար պէտք է նշանակել նոր կաբինէտ: Մինիստրական օրգան «Globo» կարծում է, որ հարկաւոր է գումարել կորտէսները՝ խաղաղութեան բանակցութիւնները վաւերացնելու համար:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 30 յուլիսի: Գեներալ Վիլսոն գրաւեց երէկ Կոամոն, Պորտօ-Րիկօյում:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 30 յուլիսի: Համաձայնութիւնը կայացաւ: Պայմանները որոշող արձանագրութիւնը կազմված է:

—

ԲԱԳՈՒ, 29 յուլիսի: Հրդեհը ոչնչացրեց Վիշաուի նաւթահորերում 9 վիշկա. այրվում է 1,000,000 պուդ նաւթ. 14 մարդ այրվածներ ստացան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի: Սըր Սկօտտ, անգլիական նոր դեսպանը Պետերբուրգում, սպասվում է ուրբաթ:

ՊԱՐԻԶ, 30 յուլիսի: Հանրապետութեան պրոկուրորը, որին Բերտիւլիւսը հաղորդել էր Էստէրհազիի և Պէյի գործի դօկումենտները, այն եզրակացութեան եկաւ, որ հիմք չը կայ դատի ենթարկել նրանց:

ՊԱՐԻԶ, 30 յուլիսի: Բերտիւլիւսը որոշումն կայացրեց, որի հիման վրա Էստէրհազին և Պէյը պէտք է մեղադրական պալատին ենթարկվեն, իբրև կեղծիքի մէջ մեղադրվողներ: Որովհետև այդ որոշումը հակառակ է պրօկուրորի եզրակացութեան, ուստի ընդհարումը նրանց մէջ հաւանական է երևում:

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, 30 յուլիսի: Եմէնից եկած լուրերը ցոյց են տալիս, որ դրութիւնը լուրջ է: Արաբներն անդադար անհանգստացնում են Թիւրքերին: Դուռն ուղարկում է նշանաւոր թըւով զօրք. մայիսից սկսած ուղարկված է 10,300 մարդ: Անկարգութիւններն աւելի լուրջ բնաւորութիւն են կրում, քան կարծում էին սկզբում:

ԼՈՆԴՈՆ, 30 յուլիսի: Համայնքների ժողով. Կըրզօն յայտնում է, որ Մակդօնալդ հեռագրում է հետևեալը. «Չինաց կառավարութիւնը շնորհակալութիւն է յայտնում Նրան պաշտպանելու ցանկութեան համար, բայց կցում է, որ ոչ մի պատանելիք չէ եղել յարձակողական գործողութեամբ»:

ՊԱՐԻԶ, 30 յուլիսի: Բողոքարկու դատարանը, քննելով Զօլայի գանգատը յուլիսի 3-ի վճռի դէմ, երեք էկսպերտների յարուցած դիֆֆամացիայի գործի առիթով, դատապարտեց նրան մի ամսվայ բանտարկութեան, 2,000 ֆրանկ տուգանքի և 10,000 ֆրանկ՝ երեք պահանջատէրերից ամեն մէկի օգտին: Զօլան բացակայ էր:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 28-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ ստէռլ.	94 ռ.	45 կ.
Բեռլինի վրա 100 մարկ „ „	45 „	90 „
Պարիզի վրա 100 ֆրանկ „ „	37 „	45 „
Պօլուիմպերեալ	— „	— „
Մաքսային կուպոններ	— „	— „
Բօրսային դիսկօնտ	4 „	6%,
4% պետական ռէնտա	$101\frac{1}{2}$ „	— „
4% Ներքին փոխառութեան	100 „	— „
$4\frac{1}{2}$% դրաւ. Թղթ. ազն. կալ. բանկի	$97\frac{1}{2}$ „	— „
$4\frac{1}{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի	$100\frac{3}{8}$ „	— „
Ներքին 5% առաջին փոխառութ.	$289\frac{1}{4}$ „	— „
Նոյնը „ երկրորդ —	249 „	— „
5% դրաւ. Թղթ. ազն. կալ. բանկի.	216 „	— „
5% պետական երկաթուղ. ռէնտա	— „	— „
Պետերբ. քաղ կր. ընկ. օբլ. 5%	$102\frac{3}{4}$ „	— „
Մոսկվայի քաղաք. կր. օբլիգացիաներ.	$100\frac{1}{2}$ „	— „
Օդեսայի — —	$100\frac{1}{2}$ „	— „
Թիֆլիսի — —	$100\frac{5}{8}$ „	— „
Թիֆլիսի կալ. բանկի 6% —	— „	— „
Նոյնը — — 5% —	— „	— „

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 5 րոպէին: Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 26 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 10 րոպէին: Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 47 րոպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ գիշերվայ 12 ժամ 20 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 6 ժամ և 33 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 7 ժամ 48 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 28 րոպէին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 20 րոպէին: Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 22 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 5 րոպէին: Բագու է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 րոպէին: Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 7 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 10 ժամ 57 րոպէին: Բագու է հասնում առաւօտեան 5 ժամ 45 րոպէին:

Կատարինէ, Ալէքսանդր և Պօղոս Միքայէլեան Երկաթագործ-Արղութեանները և Իլիա Իվանովիչ Ցինամզղարովը սրտի ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինները իրանց մօր, իսկ վերջինը իր զոքանչի՝

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՍԱԼՈՒՄԷ ԴԱՒԹԵԱՆ ԵՐԿԱԹՆԱԲԱԶՈՒԿ-ԱՐՂՈՒԹԵԱՆԻ

մահուան մասին: Հոգեհանգիստ կը կատարվի ամեն օր $7\frac{1}{2}$ ժամին երեկոյեան: Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ շաբաթ, օգոստոսի 1-ին իր բնակարանից (Ճավճավաձէվսկայա փողոց, տուն № 16) դէպի Զրկինենց եկեղեցի, առաւօտեան $9\frac{1}{2}$ ժամին: Մարմինը հողին կը յանձնուի Վէրայի հայոց հանգստարանում: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յայտնում է ի գիտութիւն բոլորի, որ նրա ատեանում, ներկայ թւի օգոստոսի 10-ին, ցերեկվայ 1 ժամին, նշանակված է ԱՃՈՒՐԴ կապալով տալու Թափառաշրջիկ ՇՆԵՐԻ բռնելն ու կոտորելը, և սատկած կենդանիների դիակների հաւաքելը: Պայմանագիրը կարելի է կարդալ ըն օրերը 9—1 ժամը: 3—3

ОТКРЫТА ПОДПИСКА

На заканчивающееся печатаніемъ

2-ое вновь обработанное и дополненное изданіе

ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СБОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ".

Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 человѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г." И. К. Айвазовскаго и „Весенняя буря" Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р. на обыкновенной бумагѣ и 5 р. на веленевой

Стоимость пересылки наложеннымъ платежомъ. Число веленевыхъ экземпляровъ ограничено, и подписчики будутъ удовлетворены по времени поступленія подписки. Высылающимъ задатокъ 1 руб. книга будетъ выслана съ переводомъ стоимости наложеннымъ платежомъ.

Подписка принимается: въ Москвѣ: въ конторѣ «Русскихъ Вѣдомостей», въ книжныхъ магазинахъ Карбасникова (на Моховой), „Трудъ" (на Тверской), «Новаго Времени» (Неглинный проѣздъ) и Вольфа (Кузнецкій мостъ); въ Тифлисѣ: въ Центральной книжной торговлѣ, на Головинскомъ проспектѣ.

NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію „Братской помощи", благоволятъ поспѣшить окончаніемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли настоящаго сборника, перепечатать объявленіе. Завѣд. ред. Гр. Джаншіевъ.

(ե. ո.) 3—5

ՁԷԹԻ ԵՒ ՍԱՊՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Յ. ԹԱՅԻՐՕՎԻ և Կ. ԱԼԻԽԱՆՕՎԻ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՁՈՒԻ ՍԱՊՈՆ

Հինգ զանազան մեծութեան, №№ 8, 13, 15, 18 և 24.

Դիմել «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ՝ ԴԵՂԱՐԱՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ» (*„Кавказское Товарищество Торговли Аптекарскими Товарами"*) և բոլոր բակալէյ մագազիններում: Մեծաքանակ գնումն նոյն իսկ գործարանի մէջ.—Երևանեան չօսէ, սեփական տունը: (ե. ո.) 8—12

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԼԷՕ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

(Պատմական վէպ, 753 երես)

Գինը 1 ՌՈՒԲ. 30 ԿՈՊԷԿ (ոսկեկազմ 2 ռուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրավաճառանոցում: ԲԱԳՈՒՈՒՄ—պ. Ներսէս Դաւթեանցի մօտ, Ա. Ի. Աղամօվի գրասենեակ. ՇՈՒՇՈՒՄ—Բագրատ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:

Հեղինակի հասցէն՝ ***ТИФЛИСЪ, редакція „Мшакъ".*** 8—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»

ԹԻՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետւութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն:

Գ) Առևտրական նամակագրութիւն:

Դ) Գեղագրութիւն և ամենաարագ ձեռքերի ուղղութիւն:

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: (ե. ո.) 15—30

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Іюля 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13